

պելլիէի ժամանակագրութիւնն ալ մէկէ աւելի կընդունի՝ Լեւոնի « զաւակները » բացատրութիւնով , ինչպէս կընդունին նաև Մարտէն ու Գրան , զոր տե՛ս գրքիս եր. 63 , ծանօթ. 1 : Իսկ Արագոնի Պետրոս Գ թագաւորին կողմէ Եգիպտոսի սուլտանին ու Բարկուկ ամիրային զրկուած թղթերէն յայտնի կերելի , որ Լեւոնի « զաւակներուն » ազատութիւնն ալ խնդրած է թագաւորը (1) : Նոյնը կրկնուած է նաև Կասախյայի Յովհաննէս Ա թագաւորին կողմէ , ինչպէս զիտենք սուլտանի ու Բարկուկի կողմէ անոր զրկուած պատասխանագրերէն (եր. 80—83) : Թողունք Լեւոնի կտակին մէջ յիշուած « զաւակներուն » խօսքը , որ երբևէ տարակոյս չի թուզուր ասոր : Ուրեմն այս փաստերով կը հաստատուի , թէ Լեւոն երկու զաւակներու հայր էր , եւ այն՝ ըստ իս՝ երկուորեակ : Թէ ինչո՞ւ « երկուորեակ » . — վասն զի տեսանք (եր. 44) որ Մարգարիտ Սիւ մտած օրը , 6 օգոստ. 1374 , ութամսեայ յղի էր , եւ ծննդաբերութիւնը տեղի ունեցաւ սեպտեմբերի սկիզբները : Արդ՝ այս թուականէն մինչև գերութեան օրը (16 ապրիլ 1375) , որ եօթն ամիս կընէ , ուրիշ զաւակ մըն ալ ունենալը շատ տարակուսական է բնական պատճառներով . հետեւաբար՝ Էջըկթիմուրի կողմէ 1375 ապրիլի 16-ին արուած ապահովագրին « անձինք զաւակաց նորա » եւ « վասն որդոց » խօսքերէն կարելի է ենթադրել , որ Մարգարիտի ծնածն երկուորեակ կընար ըլլալ : Ուրիշ կերպով կարելի չէ լուծել այս խնդիրը :

Ե՞րբ մեռան ասոնք :

Դարդել եր. 159 կըսէ , թէ 1377-ին իր Կահիրէ գտնուած միջոցին տեսած է « զգուտար նոցա » : Ուրեմն նոյն տարին Լեւոն ու Մարգարիտ ողջ էին իրենց մեկ աղջկով միայն : միւսը մեռած էր 1375-ի եւ 1377-ի միջև : Ասիկա կը հաստատուի նաև անով , որ 1380-ի հոկտեմբերին երբ Դարդել Լեւոնի փրկութեան համար Կասախյայի թագաւորին կը դիմէ՝ « աղիողորմ բանիւք » կը պատմէ « զնեղութիւնս բանտին եւ զվիշտս թագուհոյն Մարգարիտայ՝ կնոջ նորա եւ զօրիորդին Մարիամու , զսակր նոցա (2) » : Իսկ երկու տարի վերջը , 1382 օգոստոս , Դարդել Կահիրէ վերադարձին բոլորովին մինակ գտած է Լեւոնը . ասոր համար է որ անոնց խօսքը չըներ այլ եւս իր ժառանգակազրուքեան մէջ : Ուրեմն Մարգարիտի եւ Մարիամի վախճանման թուականն ալ ապահովաբար կընանք դնել 1380 հոկտեմբերի եւ 1382 օգոստոսի միջև :

• • •

(1) Տե՛ս գրքիս եր. 65—66 եւ եր. 69—70 :

(2) Դարդելի , եր. 173 :